

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ
Ստանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Ռուսագրատան մէջ:

Օտարաբարադարացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Маск“:

Ռուսագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Տարեկանը ընդունւում է ամեն լեզուով:

Տարեկանը ընդունւում է ամեն լեզուով և
իրաւաբանիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածողները: — Ներքին տե-
սւթիւն: Նամակ Արեւմտեղորայայտից: Նամակ
Նուրուջ: Ներքին լուրեր: Արտաքին տեսու-
թիւն: Արեւելեան դործեր: Թիւրքիա: Արտաքին
լուր: Մշակուի հեռագիրներ: Ցայտարարու-
թիւններ: Բանասիրական: Քրդական միու-
թիւն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆԲ- ՆԵՐ

Թիւրքիան կրկին ճգնաժամի
մէջն է: Հեռագիրը մեզ տեղեկաց-
րեց որ մեծ պետութիւնների
վերջին գրութիւնը այնպիսի ար-
պաւորութիւն ունեցաւ սուլթա-
նի վրա, որ նա այժմ անդամա-
լոյծ լինելու մօտ գրութեան մէջ
է, վախենում են խռովութիւն-
ների պալատի մէջ. սուլթանի
այժմեան գրութիւնը յիշեց-
նում է Աբդուլ-Ազիզի թագա-
ւորութեան վերջն օրերը:

Բացի սորանից լրագիրները
հաղորդում են, որ Չերնօգ-
որայում շարժում է նշմարվում
Դուլցինիօ չը յանձնելու պատ-
ճառով, ալբանացիներն էլ կրա-
րեցին բոլոր յարաբերութիւն-
ները Բիզափաշայի հետ, Յու-

նաստանում մի առանձին պա-
տերազմական ոգևորութիւն է
տիրում, Արաբիայում ապստամ-
բութիւնը չէ զսպվել, վերջապէս
և Հայաստանում շարժում է
սկսվել, եթէ ոչ թիւրքաց կա-
ռավարութեան դէմ, դոնէ թա-
փառական և հարստահարող
քիւրդ ցեղերի դէմ: Հայաստա-
նի շարժումը չունի թէև յար-
ձակողական բնակողութիւն, այլ
միայն պաշտպանողական, բայց
թիւրքիայի մնացած երկիրների
շարժման հետ միասին՝ ստա-
նում է մի առանձին նշանակու-
թիւն, աւելացնելով պետութեան
ընդհանուր ճգնաժամին մի նոր
դժուարութիւն:

Այդ բոլոր շարադուշակ երե-
ւոյթներին պէտք է աւելացնենք
և այն, որ, ինչպէս տեղեկաց-
նում է մեզ հեռագիրը, մեծ պե-
տութիւնների համաձայնութիւնը
արեւելեան խնդրի վերաբերու-
թեամբ տւելի և աւելի սերտ է
դառնում, և մինչև անգամ լուր-
կայ որ պետութիւնները չեն
բաւականանայ հասարակ ծովա-
յին ցոյցով, այլ եթէ Բ. Դու-

ռը կրնդիմանայ պետութիւննե-
րի պահանջներին Չերնօգորայի,
Յունաստանի և Հայաստանի
խնդիրները անյապաղ լուծելու,
եւրոպական մեծ պետութիւննե-
րը ուղարկելու են իրանց նաւա-
տօրմը Դարդանէլեան նեղուցը
և ձեռնամուխ կը լինեն վճռո-
ղական և խիստ միջոցների:

Ահա այս տեսակ լարված դը-
րութեան, ճգնաժամի մէջն է
գտնվում այժմ Օսմանեան պե-
տութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԻՔՍԱՆԴՐՈՎՈՒՅՑ

Սեպտեմբերի 12-ին

Դարերի ընթացքում հայ ազգը սխտեմաթիկա-
պէս պակսեց, սպառնաց մի պատճառով, այն է
կրօնական նեղ անհամբերողութիւնից զրոյթած եղ-
բայրադուրութեամբ: Այդ յատկութիւնը այն աստի-
ճան ընդհանրացած է ազգութեան մէջ, որ կարելի
է ժառանգական բնակողութիւն համարել, որ շա-
րունակ երեւում է նորա կենքի ընթացքում: Յաւան-
ք է, երբ այդպիսի կործանիչ զգացմունքով յայտնա-
վում է հայը այն ժամանակ, երբ որ նրան անհրաժեշտ
է խաղաղ և ներդաշնակ ճշմարտ եղբայրական հա-
մակրութիւնը դէպք կրօնաբանական կուսակցութիւն-
ները: Կարելի է մոռանալ այն պատմական ճշմար-
տութիւնը, որ կրօնական վիճաբանութիւնները և

եղբայրական մոլեռանդ հալածանքները միշտ առե-
րել և քանդել են ազգայնութեան սիւնը, որից և
հայ ազգը ազատ չը մնաց: Կրօնական վիճաբանու-
թիւնների արդիւնքը շատ զգալի է հայ ազգի հա-
մար. նա այժմ ունի իր կազմակերպութեան մէջ
երեք առանձնացած կրօնական կուսակցութիւն-
ներ: Այդ բաւական է մեզ յիշեցնելու և մտաբերե-
լու այն անհամար տխուր արկածները, որոնք ան-
ցան և պէտք է անցնեն հայ ազգի գլխից կրօնա-
կան երկպառակութեան պատճառով: Արտաքին
քաղաքական ճշմունքներ չեն կարող այնքան վա-
սել ազգի գոյութեանը, որքան ներքին թշնամու-
թիւնը, դաւաճանութիւնը և եղբայրադուրութիւնը:
Մեր լուսաւորչական, կաթօլիկ և աւետարանական
եղբայրները պէտք է հրաժարվեն եղբայրանեցու-
թիւնից: Հայը այսօր պէտք է մտածէ միմիայն
հայութեան վրա, հայը պէտք է մտածէ թիւրքաց
Հայաստանի ներկայ վիճակի և նրա ապագայի
վրա, ամեն ոք, եթէ նա հայ է, պէտք է անկեղծօրէն
սիրէ հայութիւնը, և ցանկալ նրա յաջող ապագան:
Մեր առաջ կայ գործելու մի լայն առաքելից: Այդ
առաքելիցը մեր ժողովրդի անտեսական և մոռալոր
շահերի մշակութեան դործն է: Գլխաւորապէս հայ
ազգի անհրաժեշտ պահանջը ներկայումս, ազգային
զգացմամբ միտքիւն է: Այդ նպատակը բաւական
է մեզ համար աշխատելու. պէտք է ազգութեան
գաղափարը նոր, թարմ, ժամանակակից պահանջ-
ների համեմատ ընդհանրացնել ամբողջ մտած-
մունքի մէջ, աշխատել միացնել բաժանած ոյժերը
մի մարմնի մէջ: Կրօնական վիճաբանութիւնները
մեզ երբէք մի որոշ նպատակի չեն հասցնի, այդ
հարցով պարագլուխ մտնողութիւնից երբէք
զուրա չենք դա: Մեր հանգիստը կարող ենք գրա-
նել եղբայրական ներդաշնակութեան մէջ: Կրօնա-
կան միակողմանի դատարարութիւնը ունեցել է
և ունի իր դառն հետեանքները, որոնցից, գծադ-
րաբար, մենք կաթօլիկ հայերս էլ կատարելապէս
ազատ չենք: Հաւասար պէտք է պաշտպանենք և
կրօնի և ազգութեան և առաջնապէս պատկանելի նշանա-
կութիւնները, չը պէտք է ատնել այն հային, որ
մտածում է հայութեան վրա: Դաւաճան է այն
հայը, որը կրօնի պատրուակով երկպառակութիւն
է սերմանում հայ գերդաստանի մէջ: Հայ ազգի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Ներքին վերջին կոնգրէսի սեղանի վրա
զրկեցան Յունաստանի և Չերնօգորայի խնդիրնե-
րը, և երբ Կ. Պոլսի եւրոպական դեսպանները ներ-
կայացին Բ. Դրանը իրանց միաբան գրութիւնը
Հայաստանի վերանորոգութիւնների մասին, այն
ժամանակ թուրքաց կառավարութիւնը յակամա-
լից յիշեց քրդական միութիւնը, որ Բիզոն
Ֆիլիքի միմիայնութեան ծնունդ էր: Ասում ենք
յակամալից, որովհետեւ թուրքաց կառավարութեան
նը շատ հաճելի էր կարող լինել այդ միութե-
թիւնը, որի բաժանման մասին ինքն շատ տա-
րիներով աշխատած էր, արհեստական կերպով ան-
հաշտութիւն սերմանելով քրդի ցեղերի մէջ, որ-
պէս դի նրանց միաբանութիւնը խանգարել, նրանց
ուժերը թուլացնել և այսպիսով հպատակ և հար-
կատու ժողովուրդ դարձնել:

Բայց պէտք էր հաշտվել ճանգամանքների հետ,
քաղաքականութիւնը այդ պահանջում էր, պէտք
էր եւրոպային մի խրտուիլ (ս. ԳԱՅՈ) ցոյց տալ:

Այդ ժամանակ, որպէս մեր յօդուածի սկզբում
յիշեցինք, թուրք մամուլը մի կողմից սկսեց վա-
ռել քրդերի խաւար ֆանատիկութիւնը, միւս
կողմից, հոչակել նրանց քաղաքակրթական արժա-
նաւորութիւնները, նրանց գրականութիւնը, զբա-
ղացները, արհեստը և այլն, որոնց բոլորը միայն
Հանրիկաթի և Հակիկի երևակայութեան մէջ
գոյութիւն ունենին: Թուրք մամուլը ոկսեց նաև

դատաւարանը «վայրենի» հայերին, սրտեք բար-
բարտաբար հարստահարում էին «խեղճ» քրդե-
րին, այլ խօսքով, սկսեց բողբոջել դառնորդի դէմ,
որ գիշատում էին գայլերին...

Իսկ Բ. Դուռը չէր տուած դեսպանների միա-
բան գրութեան պատասխանը Հայաստանի վերա-
նորոգութիւնների մասին, յանկարծ Կ. Պոլսում յա-
տնկեցան քուրդ պատուիրակներ, իբր Եփեսոս-
դուլաշի *) կողմից ուղարկված, բայց իսկապէս
թիւրքաց մայրաքաղաքի մէջ սարքված) որոնք
ներկայանալով Արեւելի-փաշային, պահանջում էին
քրդերի և Քրդստանի (անունը փոխած Հայաս-
տանի) համար ինքնավարութիւն:

Ինչ էր նշանակում այդ աչքալակարութիւնը:
Հարցը շատ պարզ է: Թուրք Հայաստանի
(թիւրքերի հայացքով Քրդաստանի) ինքնավարու-
թեան և նրա վերանորոգութիւնների վրա էր: Եթէ
պէտք էր տալ այդ երկրին ինքնավարութիւն, ին-
չու չը տալ քրդերի անունով, որոնք այդ երկրի
տէքն էին, որոնք այդ երկրի նախկին բնիկներն էին

*) Եփեսոս-Դուլաշի, Թիւրքիայի քրդերի այդ
կեղծ ներկայացուցիչը, իսկապէս պարսից հպա-
տակ մի քուրդ ցեղի շէնն է, այսինքն մօլլան կամ
հոգնարական: Նա ինքը և իր ցեղը թախտում
են պարսից երբեմն Ուլշիի, երբեմն Թար-գաւատ-
ի և երբեմն Մար-գաւատի կողմերում: Ուսումնա-
բանական պատերազմի ժամանակ Բալաբէգի վրա
յարձակվող բոլոր հրոսակներից մէկի առաջնորդն
էր նա: Այստեղ նշանակութիւն ստացաւ և թուր-
քաց կառավարութեան ուղարկութիւնը դարձնելը
իր վրա: Այն ժամանակ, երբ Կ. Պոլսում յայտնվե-
ցան իբր նրա կողմից պատուիրակներ, նա Պարս-
կաստանում էր և գուցէ ամենեւին տեղեկութիւն
չունէր, որ իր անունով բանակցութիւններ են լի-
նում Բ. Դրան հետ: «Մշակի» № 167, տեսնում
ենք, որ Եփեսոս-Դուլաշի Պարսկաստանի Սօփու-
Բուլաղ դատաւորն է սկսել իր անկարգութիւն-
ները:

և որոնք իրանց կուստուրայով բարձր էին միւս
բոլոր ազգաբնակութիւններից, առաւելապէս հա-
յերից ...

Եւրոպական դեսպանները, ի հարկէ, ուղարկու-
թիւն չը դարձրին Արեւելի-փաշայի այդ ֆոկուս-
ների վրա և քուրդ պատգամաւորութիւնը ոչինչ
չտեսնալի չը հասաւ:

Իրանից յետոյ ալբանական միութեան ճեղքնա-
կը, Արեւելի-փաշան, սկսեց քրդական միութե-
թիւն և ան վրա երաղել: Այդ միջոցին թուրք մամուլը
չտեսնալով իր խօսքը փոխել սկսեց: Այժմ քրդե-
րին մի կուստուրական, դարձացած, խաղաղասէր
և բարոյական ժողովուրդ ներկայացնելը շատ ձեռն-
տու չէր կարող լինել: Նոյնպէս ձեռնտու չէր ա-
սել թէ քրդերը այն աստիճան բարի, առաքելի
խեղճ են, որ հարստահարվում են «վայրենի» հա-
յերից: Այժմ էր ներկայացնել նրանց որպէս ան-
գութ զազաններ, որպէս բարբարոս ֆանատիկուս-
ներ, որոնք պատրաստ են մի րոպէում ոչնչացնել
լրջ հայերին, եթէ նրանց ինքնավարութեան վրա
խօսք կը լինէր:

Այդ բոլորի մէջ այն միտքը կար, որ եւրոպա-
յին ցոյց տային, թէ Բ. Դուռը հակառակ չէ Հա-
յաստանում վերանորոգութիւններ մտցնելու առա-
ջարկութեանը, և նա ինքը շատ ցանկանում է կա-
տարել այդ, բայց նա ունի իր առջև մի մեծ դը-
ժուարութիւն, և այդ դժուարութիւնը կայանում է
քրդերի ու առհասարակ մահմետական ամբողջ
մոլեռանդութեան մէջ, որոնց կրօնի և սովորու-
թիւնների հակառակ է ամեն մի վերանորոգու-
թիւն: Կամենում էին ցոյց տալ, եթէ կառավա-
րութիւնը մահմետական ժողովրդի կամքի հակա-
ռակ դնար, կարող էր պատճառ տալ մի մեծ կո-
տորածի քրիստոնէից դէմ, որի համար Բ. Դուռը
զօր արանում էր իրան պատասխանատու համարել:

Թէ որքան խաբէական էին այդ ենթադրութիւն-
ները, կարող է հասկանալ ամեն մի մարդ, որ
փոքր ի շատէ տեղեկութիւն ունի աշխարհի թիւր-
քիայի դրութեան վրա: Մահմետականները այստեղ
նոյնքան ճշմարտ, նոյնքան հարստահարված են առ-
կարգ կառավարութիւնից, որքան քրիստոնէականները:
Մահմետականները աւելի ևս ցանկանում են մի
բարւոք կառավարութիւն, և դրան ապացոյց կա-
րող է լինել դեռ չը զսպված Մուսթէֆիկ տարա-
ների ապստամբութիւնը, Ղօզան-դաղիների ապս-
տամբութիւնը և այն վերանորոգութիւնները, որ
պահանջում էր Միջհաս-փաշան Սերիայի համար,
որը յամառութեամբ մերժվեցաւ Բ. Դուռից:

Մահմետական մոլեռանդութիւնը մի խրտուիլ
է, որով Բ. Դուռը աշխատում է միշտ վախճնել
Եւրոպային: Այնքան խօսվում է Հայաստանի վե-
րանորոգութիւնների, Հայաստանի ինքնավարու-
թեան մասին, այնքան բացատրութիւններ են
տրվում Բ. Դրան կողմից, բայց որքան հայկական
լեռների գայլերը տեղեկութիւն ունեն այդ բոլոր
բանակցութիւնների մասին, նոյնքան տեղեկութիւն
ունի քուրդ ժողովուրդը: Այդ բոլորը խօսվում, շին-
վում, սարքվում են Կ. Պոլսում: Քուրդին ինչով
կարող են հետաքրքրել Հայաստանի ինքնավարու-
թիւնը կամ այնտեղ մտցնելիւ վերանորոգութիւն-
ները: Նա ոչ լրագիր է կարդում և ոչ գիտել, թէ
ինչ է կատարվում իր բնակած լեռների միւս կող-
մում:

Այսուամենայնիւ Բ. Դրանը նպատատար էր
ցոյց տալ մի քրդական միութիւն, եթէ նա
գոյութիւն չունէր, պէտք էր յայտնել, թէ կարող
է կազմվել, որպէս այդ ենթադրում է «Օսմանլի»
լրագիրը:

Արեւոք կարող է կազմվել, — ահա այդ հայցը
պարզելու համար մենք հարկաւոր ենք համարել:

Քրիստոսն ամբողջ է, Հայաստանի
կազմել անկարելի է, բայց մի բան կարող է պ
տահել: Թուրք կառավարութեան ներկայացուց
ները կարող են գրգռել բողոքներ զանազան զեղ
պանքներով, այս և այն չէլիքով, որ կողոպտեն հ
յոս գիւղերը: Բողոքը այդ յանձն կառնեն, և
Նրանց թող է տրվում անպատիժ առաջակութի
գործել: Նրանք կը սկսեն Հայաստանում կողոպտ
արել, սպանել,— և այդ բոլոր բարբարոսութիւ
ներն էլ Պոլսում կը տան բաղադրական կերպ
րանք: Դեռ անցեալ տարվայ աշնան ժամանակ
Եւլի-Իսթանբուլ քաղաքի Պարսկաստանի սա
մանից թուրքաց ճոյրի վրա, Սղաքայ և Բաշկ-

Ամենքը բացարձակ յայտնում են, որ զլազաւան, միանալով Ռուսաստանի հետ, մտադիր է բաժանել Քիւրքիսան: Անգլիական առաջին մինիստրը այլ ևս չէ հետևում բաժանման խորհուրդներին: Դադարած քրդական զէմ չափազանց զրգոված է, որովհետև այդ պետութիւնը եւրոպական միւս պետութիւնների հետ կառավարւալէն համաձայնութեամբ չէ ուզում գործել: Պաշտօնական լրագիրները զգուշացնում են կառավարութեանը, իսկ ազատամիտ լրագիրները ընդհանրապէս անդուլ են, որ կառավարութիւնը, մինչև անգամ եթէ միայնակ էլ մնայ, այնուամենայնիւ պէտք է ստիպէ Բ. Գրանը, որ նա այլևս չընդդիմադրէ չեքոսլովակական, յունական և հայկական խնդիրներին լուծվելուն:

«Times» լրագիրն Բագուզայից գրում են, որ Ռիզա-փաշա ցանկացել է այրանական միութեան հովանաւորութեան տակ մտնել: Լիզան վճռել է սպանել Ռիզա-փաշային, եթէ նա դաւաճան հանդիսանայ: Եթէ Ռիզա-փաշա կամենար և երկվմի չը գործէր, Դուլցինիօ այժմ չեքոսլովակների ձեռքին կը լինէր: Սկուտարիի հեռապիւններին պէտք չէ հաւատալ, որովհետև նրանք խմբագրւում են թիւրք փաշաներից: Ծովապետ Սէյմուր մի նամակ ուղարկեց Ռիզա-փաշային սեպտեմբերի 17-ին, որով նա կարճաժամ պատասխան է պահանջում Դուլցինիօն չեքոսլովակներին յանձնելու մասին: Անգլիական նաւատորմը ձմեռը երկու կը մնայ այրանական ափերի մօտ:

«Standard» լրագիրը թղթակիցը, որ հետևում է միացեալ նաւատորմին, Բագուզայից գրում է սեպտեմբերի 20-ից:

Այստեղ ամեն բան կասկածանքի և անյայտութեան մէջ է և անանային քամիները չափազանց անհանգստացնում են ծովապետներին, որոնք նաւատորմի ամբողջութեան համար պատասխանատու են: Այստեղի նաւահանգիստը ապահով չէ և փոթորկի ժամանակ նաւատորմները փախչել կենթարկվեն: Դուլցինիօն չեքոսլովակներին յանձնելու մասին ոչինչ տեղեկութիւն չեք ստանում, իսկ եթէ ոյժ գործ գրվի, բոլոր նաւերը իսկոյն կը հեռանան: Յայտնի չէ, թէ դա-

նազան կառավարութիւնները ինչ տեսակ հրահանգներ են տուել իրանց ծովապետներին: Ամենքը գիտեն, որ եթէ ծովապետ Սէյմուր ոյժ կը գործ գնէ, նրան միայն ուղարկեց Ռիզա-փաշային և նամակատար սեպտեմբերի 23-ից շուտ չի վերադառնայ: Հաւանական է, որ ծովապետ Սէյմուր կուղեորվի Սկուտարի: Ռիզա փաշան թէպէտ Բ. Գրանից ստացել է հրահանգներ, բայց որոշ հրամաններ չունի պահանջներին դէմ ոյժ գործ գնելու մասին: Նաւատորմի գլխաւոր հրամանատարութիւնը անգլիական ծովապետ Սէյմուր ընդունեց և այդ բոլորից սկսեցաւ ծովային իսկական ցոյցը: Սէյմուր հրաման է ստացել իր կառավարութեանց ոչ թէ միայն ուղարկել Դուլցինիօ, այլ և կրակ բացանել այրանցիների դէմ, եթէ մինչև անգամ նրանք ամբողջութեամբ պաշտպանված չը լինեն:

«Polit. Correspond.» լրագիրն Սթէնլիից գրում են, որ սեպտեմբերի 18-ին պ. Գոշեն տեսնվեցաւ սուլթանի հետ: Նա բողոքեց թիւրքաց կառավարութեան Դուլցինիօի գործի մէջ բռնած ընթացքի դէմ: Դեսպանը սպառնաց թողնել Կ. Պոլիս, եթէ Բ. Գրանը չը կատարէ նրա պահանջները: Թիւրքաց արտաքին գործերի և զինուորական մինիստրները ամբողջ գիշեր խորհրդակցում էին անգլիական դեսպանի հետ:

«Polit. Correspond.» լրագիրն Սթէնլիից գրում են, որ Նանինայի գլխաւոր նահանգապետը հրաւիրել է իր մօտ անուանի այրանցիներին և առաջարկել է նրանց այրանցիներից կամաւորները զօրաբաժիններ կազմել: Նահանգապետը խոստացել է այրանցիներին օգնութիւն հասցնել թէ դրամով և թէ զէնքով:

ԹԻՒՐԿԻԱ

«Polit. Correspond.» լրագիրն գրում են Կ. Պոլսից սեպտեմբերի 17-ից:

Հէնց որ Սայիդ-փաշա առաջին մինիստրի պաշտօն ստացաւ, օտար պետութիւնների դեսպանատնների ծառայողները շտապեցին շնորհակտել նրան: Հաւատացնում են, որ

արտաքին գործերի մինիստր Կազիր-փաշային անկման պատճառը սուլթանին տուած նրա խորհուրդներն էին: Կազիր-փաշա առաջարկում էր իր տիրոջը չընդդիմանալ միացեալ Եւրոպայի կառքին: Սուլթանը իր ազդեցականութեամբ մի գրութիւն պատրաստել, որով սուլթանը հաւատացնում էր, թէ ինքը իբրեւ մահաւանդների առաջնորդ անկարող է հրամայել իր գործերին, որ նրանք պատերազմեն իրանց կրօնակից այրանցիների դէմ: Դուլցինիօն չեքոսլովակներին յանձնելու համար: Կազիր-փաշային յանձնարած էր հաստատել տալ մինիստրներին այդ գրութիւնը, բայց նա հրաժարվեցաւ կատարել այդ յանձնարարութիւնը և իր կողմից խաղաղասէր առաջարկութիւններ արաւ: Նոյն օրը Կազիր-փաշա ներկայացրեց իր հրաժարականը, բայց սուլթանը սովորականին հակառակ գրեց իր խառտի մէջ, որ մինիստրը հեռացրած է պաշտօնից: Բոլոր դեսպանները համակրում են հրաժարված մինիստրին, որովհետև նա միանշանակ աւելի խելացի կերպով էր գործում: Կազիր-փաշա հաւատացած էր, որ իր հայրենիքի համար աւելի լաւ է երթարկվել Եւրոպայի կամքին, քան թէ նրան ընդդիմանալ: Ամենքը հետաքրքրութեամբ սպասում են, թէ Սայիդ-փաշա ինչպէս կը վերաբերվի ծովային ցոյցին: Թիւրքաց գործերի հետ լաւ ծանօթ մի բարձրաստիճանի թիւրք հաւատացնում է, թէ Սայիդ փաշա այնքան խելոյ չէ, որ ընդդիմանայ Եւրոպայի կամքին, կամ սուլթանին այդպիսի խորհուրդ տալ:

Սուլթանը, որ Արթին Դադեանին պատուիրած է մի գրութիւն պատրաստել, որի համեմատ նախ պէտք է իսկութեամբ որոշել սահմանները, իսկ յետոյ յանձնել Դուլցինիօ Զեքոսլովակներին: Զեքոսլովակի իշխանը մեծ դժուարութեամբ է հրաժարվում Դուլցայից և Դինոյից: Կառավարութիւնները համաձայն են այդ տեղերը թողնել թիւրքիային, եթէ սա գործը խաղաղութեամբ կը վերջանայ: Սուլթանի ընդդիմադրութեան պատճառները նրա կրօնական զգացմունքներն են: Արդու-Համիդ փախեւում է անպաշտպան մահաւանդների

էի գաւառում կրկին ոչնչացրեց մինչև քսան հայոց զինքեր: Այդ մի պարզ ապատարութիւն էր, որ համարեալ ամեն տարի պատահում է Հայաստանում: Բայց Կ. Պոլսում նրան տուեցին քաղաքական բռնաւորութիւն:

Նոյնը կարող է պատահել և այսուհետ: Թուրքաց կառավարութեան ներկայացուցիչները զադանի կերպով կը զրդեն ջրգրին հայերի դէմ, կոտորած կը սկսվի. իսկ Կ. Պոլսում թէ Բ. Գրանը թէ թուրք մամուլը կը սկսեն զոյգել, ահա քրդական մի ու թիւնը, տեսնւք, այդ բոլոր կոտորածը Հայաստանին ինքնավարութիւն և հայերի համար արտօնութիւններ պահանջելու համար է: Մինչդեռ քրդերը ինքնավարութեան և Հայաստանի վերանորոգութեան մասին ոչինչ զադախար չունեն, և հասկանալ անգամ չեն կարող, թէ ինչպէս է վերանորոգութիւնը: Նրանք կը կատարել իրանց բարբարոսութիւնները, որպէս միշտ, լոկ լափշտակասիրութեան նպատակով, բայց թուրքաց կառավարութիւնը կը տայ նրանց քաղաքական նպատակ:

Թէ այսպէս, թէ այնպէս, զանազանութիւնը մեծ է: Եւրոպը արդեւ զիտակցաբար կը գործէ, թէ մեղմաբար, բայց մի և նոյն հետևանքին կը հասնեն, որ Հայաստանում կոտորած տեղի կունենայ: Փաստոր արդէն կան: Դեռ երկէ կարգացնէր փ հետադիր, որով Վանի անգլիական կոնսուլը հայտնում է տալիս Կ. Պոլսի, թէ քրդերը ոչնչացրին հայոց 13 գիւղեր: Հարցնում ենք, ինչ պէտք է անեն այդ դէպքերում հայերը: Մինչև հիմայ երբ քրդերը կողպուում են, այրում էին, սպանում էին, հայերը գիտում էին Թուրքաց կառավարութեանը և դատաստան էին պահանջում: Բայց հիմայ, երբ կառավարութեանը կաշառեցինք իրանք են զրդում քրդերին:

բարբարոսութիւններ գործել, էլ ում կարող են դիմել հայերը: Մեզ կը պատասխանեն, թէ—Եւրոպային, որ յանձն է տուել չսկիւ Հայաստանի բարեկարգութիւններին: Բայց մինչև Եւրոպան կը ընեն, կը տեղեկանայ Հայաստանում գործվածները, մինչև օգնութեան ձեռքը կը հասցնէ (կը հասցնէ արդեւ) ինչպէս ասում են՝ չլուրը կը գայ, ջրաղացը կը տանէ...:

Հայերը այժմ լաւ չափազանց են այդ: Հասկացել են, որ հասնել է մի փնտրական րոպէ, երբ կամ պէտք է յանձն առնել անորկաբար ոչնչանալ, կամ եթէ ցանկանում են իրանց գոյութիւնը պահպանել, հարկաւոր է ամեն ուժերով ընդդիմադրել քրդերի փայրին յարձակումներին: Ուրիշ ճար չը կայ: Այդ իսկ պատճառով կազմվեցան հայերից զինեալ խումբեր, որոնց նպատակն է ոչ թէ ապստամբութիւն, ոչ թէ պատերազմ թուրքաց կառավարութեան դէմ, այլ պատմել քրդերին, եթէ նրանք կը յանդգնեն խռովել երկրի խաղաղութիւնը և կողպալով անգին հայ գիւղացիներին: Այդ զինեալ խումբերը, որոնք թիւր փոքր չէ, շրջում են հայկական լեռների վրա, դիտում են թշնամու շարժումը և ամեն տեղ վրէժնիկներ են լինում, երբ նկատում են քրդերի կողմից որ և իցն անգլիկութիւն:

Հայոց զինեալ խումբերը մինչև անգամ պաշտպանում են քրդերի խաղաղասէր ցեղերին, երբ պատահում է այս վերջիններին ենթարկվել իրանց ցեղակիցների բարբարոսութեանը: Այդ պատճառով, քրդերից շատերը միացած են հայերի հետ և աւելի բարեւոր են համարում կուռել ընդհանուր թշնամու դէմ, քան թէ միմեկը հայերին, որոնցից միշտ օգնութիւն և հաւատարմութիւն են վայելած:

Հայոց զինեալ խումբերի հետ միացել են երեսուր Մար-Շիմոնի քաջ ասորիները: Մար-Շիմոնը, Զոլամբիկի լեռները այդ հզօր իշխանը և պատրի-

կրօնական համագործակցները: Նա երբեք չի հրամայել իր գործերին հրացան արձակել այրանցիներին դէմ: Եթէ այսպէս չը լինէր Ռիզա-փաշայի 11,000 թիւրք գործերը բաւական էին այրանցիներին յաղթելու: Համար: Քանի որ մեծ պետութիւնները խաղաղութիւնը պահպանելու համար իրանց պահանջները չափազանց սահմանափակել են, սուլթանը և նրա խորհրդատուները անհերքելի գործ կը լինեն կատարած, եթէ իրանք էլ զիջումներ չեն անի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Փարիզից «Polit. Correspond.» լրագիրն գրում են. Ցանկալի կը լինէր, որ անգլիական առաջին մինիստրը չեքոսլովակիստ և յունական հարցերը վերջացնելուց յետոյ, շատ չը դրէր Եւրոպական պետութիւններին ստիպողական միջոցներ գործ դնել Հայաստանի մէջ և այլ տեղեր վերանորոգութիւններ մտցնելու մասին: Այժմ պ. Գրանտոն պահանջում է թշնամութիւնի օգնութեանը դիմել: Միւս անգամ նա կը պահանջի նաւերից ամբողջ քիւ լեյնին և եթէ ընդհանուր վերանորոգութիւններ չեն իրագործվի, որ շատ հաւանական է, Կազմութեան կը ցանկանայ արդաւել Կ. Պոլսի վրա և Թիւրքիային իր հազարաւորութեանը ենթարկել: Այս բոլորը անկարելի է թող տալ, այդ պատճառով Զրանիսան զգուշ է վարվում, երբ հարկաւոր է լինում դիմել ոյժին:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԻ, 22 սեպտեմբերի: «НОВОЕ ВРЕМЯ» լրագիրը լսել է, որ եկող տարւոյնից Ստանկիվկէ կը սկսի հրատարակել մի մեծ ամենօրեայ լրագիր «ПРАВДА» վերնագրով: 10հոկտեմբ. 21 սեպտեմբերի: Դադարած, Գրենվիլ, Գարկոս և Նորքերիւկ ուղեւորվեցան իրանց կայուածները: Հարսիդոսն կուղեւորվի Քիւրքիս: Այն լուրը, իբր թէ էգուց մինիստրները խորհուրդ է լինելու, անհիմն է:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԻ, 22 սեպտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 25 կ., երկրորդ 92 ր. 25 կ., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 92 ր. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 221 ր. 50 կ., երկրորդ 216 ր. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը 91 ր., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 87 կ., սակի 8 ր.: Ռուսաց 1 րուբլ Լոնդոնի վրա արժէ 24,62 պէստ:

ԽՄԱԳԻՐ—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՆԻ

Սովը ունեցաւ իր և ուրիշ օգնութիւնները: Նա կապեց լաւոյապէս ամբողջ հայ ազգի սրտերը, որոնք աշխարհի ամենահեռաւոր անկիւններէն բուկեցին թափել այնտեղ իրանց առատ նաւերը: Սովը հաշտեցրեց հայերի հետ մի քանի բողոք ցեղեր, որոնք հաւատար օժանդակութիւն էին ստանում հայոց մամուլաւորներէն, որոնք Հայաստանի բողոք քաղաքներում կազմված էին սովատանջներին օգնելու նպատակով: Վերջապէս, սովի պատճառով ներկայ տարվայ դարեանը մշակներ ասպին բազմութիւն Վանի, Մուշի, Բազէշի և Հին-Բայազէշի կողմերից անցան դէպի Ռուսաստանը և տարածվեցան Անդրկովկասի բոլոր գաւառներում: Այդ մշակները, այժմ լսելով Հայաստանի վտանգը, խումբերով վերադառնում են դէպի իրանց հայրենիքը:

Թուրքաց հայերի այժմեան շարժումը իրական փառա է: Նա դարձրել տխուր հալածանքների մի պղտու հետեանք է: Նա պատմական անհաղթաւորութիւններ մի ստուգել արտայայտութիւն է: Թիւրքիան կարող է զուգել այդ շարժումը նրանով միայն, երբ կը կատարէ հայերի իրաւացի պահանջը: Բայց քանի որ հայկական խնդիրը մեռցնելու նպատակով, Թուրքիան կաշառեւ քրդական կը բողոքէ: հայերի արդար կատարութիւնը...

ՄԵԼԻԶՁԱԳԻՆ

*) Նեստորական ասորիների պատրիարքական աթոռը ժամանակակից է, բոլոր պատրիարքները յաջորդաբար ընտրվում են մի և նոյն անիցը և կոչվում են Մար-Շիմոն, որ նշանակում է Տէր-Սիմոն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս տարւոյն ապրիլ ամսու յաւարակութեամբ այս օրերս լոյս կը տեսնէ Ստեփաննոս աւագ քահանայ Տէր-Ստեփաննոսի աշխատասիրած «Աղբընք քրիստոնէական ուղղափառ հաւատոյ հայաստանեայ եկեղեցւոյ դասագրքի երկրորդ տպագրութիւնը հետեւեալ յաւելումներով. համար. 11. Յակոբ Նահապետի որդիքը. 12. Յովսէփի բանտում. 13. Յովսէփի փառքը. 14. Յովսէփի եղբայրները զախն են ներգրտու. 15. Յովսէփի եղբայրները երկրորդ դարձաւոր եղբայրու. 16. Քէ ինչպէս եղբայրները ծանաչեցին Յովսէփին. 17. Յակոբի ներգրտու տեղափոխութիւնը:

Աղբընք վանքի թաղաւորի Պաշի քո Քրիստոս, Այսօր կանգնեցաւ և էջմիածինն ի չորէն շարականները դասաւորված են իրանց տեղերում պատմութեան իմաստին համաձայն: Նկարագրութիւնն օտնալուսայի հանդէսի ու թուարկութիւնն ի պատիւ սրբոյ չորն մերոյ Գրիգորի Լուսաւորչի սահմանուած տօներին: Կինը ըստ առաջնոյն 50 կողմէ կէ:

Այլ երջապէս հարցմունքները, որոնք առաջին տպագրութեան մէջ զետեղուած էին իւրաքանչիւր յօդուածի ներքոյ, այժմ ամփոփուեցան գրքերի վերջումը առանձնապէս:

Մամուլի տակից գուրս եկաւ և վաճառվում է նոյն գրավաճառանոցում չորս դասագրքի թուարկութեան Գ. Վարձեւեանի, զինն է 70 կողմէ:

1. Ժողովրդական այբբենարան	5.
2. Տէր-Ղևոնդեան Մայրենի լեզու ա. տ.	35.
3. — — — Մայրենի լեզու բ. տ.	40.
4. — — — Մայրենի լեզու գ. և դ. տ.	70.
5. Աղայեանց ուսումն Մայրենի լեզուի	15.
6. Ս. Մանուկեան Նահապետական և Հայր. աշխատ.	60.
7. — — — Աղբընքի ընտանեկան աշխարհ ա. տ.	25.
8. — — — Կիւրապանց աշխարհ	30.
9. — — — Աղբ. ու ընտան. աշխարհ ուսուցչաց ձեռնարկ	70.
10. Տէր-Պաշեան դասագրքը ա. ր. РУССКОЕ СЛОВО	45.
11. Այլապէս Գ. Ս. Ն. Նախակրթանք հ. լեզուի մ. ա.	40.
12. Ներշնչ. պատմութիւն Վարդանանց	1.
13. — — — Նոյն հասարակ կարգի վրա	20.
14. Տէր-Սարգսեան հայերէն վայելչագրութեան օրինակ	20.
15. Պալատեան Քերականութիւն Մայրենի լեզուի	50.

Այլ երկրորդ գրքերի գնովները Վերստիական գրավաճառանոցից նշանաւոր գիծում են ստանում:

Դուրս է գալու մամուլի տակից Ներկողայոսի Յ. Ալիսանեանի շարագրութիւնը. Երուանդ Երկրորդ, ողբերգութիւն հինգ արարուածի մէջ, ոտանաւորով գրած: Գինն է երկու րուբլի: Գրավաճառները պահանջելով մինչեւ հարիւր հատոր ունեն 10⁰/₁₀ զինումն. իսկ աւելի—20⁰/₁₀: Փողատի ծախսը հեղինակը առնում է իր վրա:

Յանկացողները կարող են զիմել ուղղակի հետեւեալ հասցեով:

Въ Майкопѣ, Кубан. обл. Мирному Судѣ 1 Участка, Николаю Иосифовичу Алиханову. 1—5

ԱՆԳԻԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ տաքվեցաւ ՇՈՒԿԱՆ ԵՒ ԿԱԿՍՈ ԳՐԱՅ 1—20

Մամուլի տակից շուտով լոյս կը տեսնէ ՏԱՂԱՎԱՐԱՂ ԱՅԳԱՍԹԻՆ ԵՐԳԵՐԻ, իբրեւ երգեցողութեան դասագրքի հայ դպրոցների համար: Կրքը բաղկացած է երկու մասերից: I մասում զետեղուած են թէ տպուած և թէ մինչև այժմ մեր միւս երգարաններում անտիպ փացած և ամեն տեղ տարածուած երգեր: II մասում մանկական երգեր: Ծաղիկաբոյլ այն առաւելութիւնն ունի միւս երգարաններից, որ իւր մէջ չէ պահուած զարդապատկան հասարակին անվայել և անյարմար երգեր: Հետևանքներից զխաւոր տեղերը բռնում են Նալբանդանց, Պէշիկթաշեան, Նաբբէյ, Յէլէկեան, Պատկանեանց, Արշանեան, Բարխաւարեանց, Արովան, Կուրեան, Հայկունի, Թաղիաթեանց, Շահաղիեանց, Գողթեանց, Մէլլուրեան, Այլապէս, Թերզեան, Մելիք-Յակոբեանց, Մուրաթեանց և այլն և այլն.

2—2

Հայոց պատմութիւնը իսկական աղբընքներից ուսումնասիրելու համար կարեւոր մի գիրք է «Հիւսուածք բանից նախնի պատմադրաց հայոց» Յ հատոր, աշխատաս. Կ. Կոստանեանցի:

Ա. հատորը բովանդակում է Արշակունեաց թագաւորութեան անկման և Վարդանանց ու Վահանեանց պատերազմների մանրամասն պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած գրաբար:

Բ. հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհաբար, որ ա. հատորի ճիշտ թարգմանութիւնն է.

Գ. հատորը բովանդակում է ա. և բ. հատորների համար կարեւոր ծանօթութիւններ. ժամանակագրական աղիւսակներ յաւելածներ:

Վաճառվում են երեք հատորը միասին—3 ր.

ա. և բ. հատորը միասին 2 ր. 25 կ.

բ. և գ. հատորը միասին 2 ր. 25.

Աղբընքի դպրոցների համար 10 օրինակից աւել առնողն 10% զինումն կը դրուի.

գնելու համար զիմել—Ալեքսանդրապոլ—Յովսէփի աւագ քահանայ Կոստանեանցին.

Տիֆլիս—Վերստիական գրավաճառանոց:

Սոսկվա—Հայոց եկեղեցու երեցիոսան պ. Մեղուն Փանեանցին:

10—10

ՎԱՐԴԱՆԱՅԻՆ ԿԱՍՏԱՆ ԵՐԿԻ գործարարական ԹԻՖԼԻՍԻՍ ԾԱՌՈՐ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսվեցին ծախվել ամենալաւ մարքիւմ ՕՂԻՆԵՐ հետեւեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲԻՆԵՉԻ և ԲՈՒՄԵՐԻՆԻ: Ե՛րբ շաբաթ արժէ 45 կ., առանց ամանի 38 կ., կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., և, ամեն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն: Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զինումն է անվում: Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՐՏԻՅ շոգիի մաքրութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՅՐԱՔԱՎԱՐԻ ամենալաւ գործարանների մէջ պատրաստվածներից վատ չեն: Պ. պ. գնողները ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիները պահեստը զանվում է Միլլայեան կամուրջի վրա, Յենարաշայա հիւանդոցի տակ, Լիխաւիսկու տանը, Վօրոնցովի արձանի դիմացը: 8—8 (2 շաբ.)

ԻՃԵԿՆՈՑ

ՀԻՄՆԱԳԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՈՏՆԱՆ 9-13 ՄԻՆՈՒՆ 1 ԺԱՄԱՆ

Երկու շաբթի. Գալթիօնի կանանց և մանկաբարձական հիւանդ. Լիսիցեի և Գօրալեի շնորհիւ հ. Գիւլարեանց խիւրդիական և աչքերի հ. Շտեմբօրսկի վնասական և կաշու հ.:

Երեք շաբթի. Միլլայեի խիւրդիական հ. Միլլայեի շնորհիւ հ. Կրիգի շնորհիւ հ. Երեք շաբթի. Կրիգի շնորհիւ հ. Երեք շաբթի. Կրիգի շնորհիւ հ. Երեք շաբթի. Կրիգի շնորհիւ հ.:

Չորեք շաբթի. Լիսիցեի շնորհիւ հ. Շտեմբօրսկի վնասական և կաշու հ. Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:


Հինգ շաբթի. Գալթիօնի մանկաբարձական և կանանց հ. Միլլայեի շնորհիւ հ. Կրիգի շնորհիւ հ. Երեք շաբթի. Կրիգի շնորհիւ հ. Երեք շաբթի. Կրիգի շնորհիւ հ.:

Ուրբաթ. Միլլայեի խիւրդիական հ. Լիսիցեի շնորհիւ հ. Բախուտով մանկաբարձական, կանանց և երեք շաբթի. Շտեմբօրսկի և Աստուածատուրով շնորհիւ հ.:


Շաբաթ. Կրիգի շնորհիւ և երեք շաբթի. Լիսիցեի շնորհիւ հ.:

Առաջադրուած Օրբի խաւաքառ հիւանդանոցի բժշկանոցի ամսական ընդունում է իր տանը ամենայն օր, ամենայն ժամանակ: Բացի կրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրքը Լիսիցեի:



Կ. ՊԵՆՏԵՐ, ԵՏԵՄԵՆՍԿԱՆՍԵ
ՍԿԵՅԵ ԲՈՒՆՈՑ
ԶՈՒՐԱՆՈՒՄԻ ԵԿՈՂ ՃԵՐՄԱՆԱՅԻՆ ՍԵՂԱՆԻ ԵՒ ԲՈՒՄԵՐԻՆԻ
արհիւմ եմ պատուելի հասարակութեանը ՄԵՃԱՐԱՆԻ ԿՈՒԹԵՄԻՆԻ ԶԵՆՈՒՄԻ ԵՒ ՈՏԻՔԻ ԿԱՐԻ ՄԵՐԵՆԵՆԵՐԻ, եւրոպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՅ, ամենանոր ԶԵՆՈՒՄԻ, չափազանց ԼԺՍԵ գնեցող, այսինքն: Զեղքի մեքենա մեր 12—5 րուբլ: Ուրբի 50—80 րուբլ:



9—52